այժմ, և գալոց են ևս։ Եւ այսու յուսամ թէ բաղձանք մեր կատարիցին. այսինքն գոլ և լինիլ ի Հռոմ Փրոգուռաթօր ոմն ազգին հայոց. գիտուն և տեղեակ ամենից իրողութեանց նոցին, և ծանօթագոյն ամենամեծ գթութեանն գորովականի մօր մերոյ սրբոյ եկեղեցւոյն կաթողիկէի, ոչ խնդրող փառաց և պատուոց, և կամ սիրող շահուց յատկականաց և այլն, զոր տէր պարգեւեալ առաջացուսցէ ամէն։ Սուրբ Դողովի գիրն ևս՝ կարծեմ այս փոսթիւն ժամանել առ քեզ, և վասն ապրելեացն տալոց իցեն քեզ ամիսն Դեկ սկուութ, որ մի կամ Բ կրօնաւորօք նստցիս ի Հռոմ։ Զայս ամենայն որ գրեցի, ոչ ոք գիտէ, բաց ի տօն Ճիւզէփէն, Սուգիաս եպիսկոպոսէն և Ղազրէմիզէնց Յոհանէն՝ որ է թարգման նորին։ Բարի է մնալն ի ծածուկ, մինչ ի ժամանումն քո ի Հռոմ. յայսմանէ բարութիւնք մեծ ծնանին՝ եթէ գայցես վաղվաղակի...։

Գերարգելութեան քոյոյ նուաստ ծառայ

գրեցաւ 1724 դեկտ. 23 Յոհան Եպիսկոպոս Սեպաստիոյ
ի սուրբ Օնոֆրին ի Հռոմ

ԻԶ.

Կը հանենք հետևեալ պատառիկը Մխիթարայ աշակերտներէն՝ Հ. Միքայէլ վարդապետ Վարդերեսեան Սեբաստացւոյ նամակէն, զոր Աբբահօր՝ ղրկած է։

Վերապատուելագունեղի տեառն տեառն Աբբայ Հօրդ իմոյ
Մխիթարայ Աստուածաբանուրեան Վարդապետի

... ի 23ն սեպտեմբերի եկն լուրն առման կէնճէյու, հինկ օր տօնանմայ արարին թօփից, և ի վերջի գիշերն զարմանալի պայծառութիւն լապտերաց ի վերայ ծովու ի վերայ նաւուց և նաւակաց Ըսկուտարու մինչև ի կէմրիւկն Ստամպօլու պայծառութիւն և այլք արհեստական հուրք և որոտմունք, բերդից և դղեկաց այրեցմունք, յորոց հուր արհեստական իբրև զսոս և իբրև զչրմուիս բարձրանայր յերկինս, և անթիւ թօփից արձակմունք, աւելի քան զհինկ ժամ տեւեաց։ Բազում աղչկունք փոքունք գերիք, հազիւ գտանի գնող ի քրիստոնէից, աղէտ նոցին է յոյժ։ Ցոմանց լուաք թէ խաբէաբար գունաք հայոց ի ձեռս անկեալք սրախո(ղ)խողք եղեալք են. և յոմա(ն)ց թէ տաճկունք բազումք անկեալք են ի նոցանէ։...

Մնամ պատրաստական ամենայնի ես նուաստ ծառայ
Հայր Միքայէլ Վարդապետ

գրեցաւ գիրս ի թուին Քրիստոսի 1725ին
հոկտեմբերի 5

ԻԷ.

Շահաւէտ թղթակցութեանց շարքը առաջ կը տանի Յովհան եպիսկոպոս՝ իր մտերմական նամակներովը Հռովմէն առ Մխիթար՝ ստէպ ազգային — եկեղեցական հարցերու շուրջ տեղեկութիւններ հասցնելով, անոնց կարգէն է և հետևեալը։